ՀԻՆ ՄԱՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՐՐՈՐԴ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Աքեմենյան պետության 10-րդ (մարական) սատրապության բնակիչների էթնիկական կազմի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է պարունակում Հերոդոտի «Պատմությունը»։ Դրանցից մեկի համաձայն «էկբատանը, մնացած Մարաստանը, պարիկանիները և օրթոկորիբանտիները վճարում էին 450 տաղանդ։ Դա տասներորդ շրջանն է»[1]։

Ինչպես տեսնում ենք, 10-րդ սատրապության տարածքում նրա հիմնական բնակիչներից՝ իրանախոս մարերից (մեդացիներից)[2] *բացի, հիշատակված են նաև ուրիշ երկու էթնիկական խմբավորումներ՝ պարիկանիները* (Παρικανιοι) *և օրթոկորիբանտիները* (Ὀρθοκορυβάντιοι)։ *Սրանցից առաջինները ներկայացնում էին սատրապության տեղաբնիկ ոչ իրանական (ոչ հնդեվրոպական) էթնիկական տարրը*[3]։ *Ըստ այսմ, պատահական չէ, որ նույն Հերոդոտի ուրիշ վկայությունների համաձայն, պարիկանիներ էին կոչվում նաև հարավ-արևելյան Իրանի բնակչության մի մասը՝ ուտիների* (Ὀυτιοι = *հին պարս.* Yautiyā), *մյուկերի* (Μύκοι = *հին պարս.* Maka)[4] *և «ասիական Եթովպացիների»*[5] *հարևանները*[6]։

Իսկ ի՞նչ էթնիկական տարր էին ներկայացնում օրթոկորիբանտիները։ Անկասկած, ոչ արևելաանդրկովկասյան տարածությունների սկյութա-սակյան էթնիկական տարրը, որի մեծագույն մասը հեռացել էր ինչպես Հյուսիսային Կովկաս և մերձսևծովյան շրջաններ (մ. թ. ա. VII դարի վերջին քառորդում)[7], *այնպես էլ արևմտյան Փոքր Ասիա (մ. թ. ա. VI դարի սկզբին)*[8]։ *Նկատի առնենք, որ օրթոկորիբանտիները բնակվում էին 10-րդ սատրապության մեջ, իսկ ժամանակին սկյութա-սակյան բնակչություն ունեցած արևե-*

---

1 Herod., III, 92.

2 *Մարերը (մեդացիները) միատարր չէին և բաժանվում էին վեց առանձին ցեղերի* (Herod., I, 101):

3 *«Պարիկանիները, հավանաբար, կապվում են Ավեստայի առեղծվածային* parika-*յի հետ (Վիդևդատ, I, 10, XX, 10, Յաշտ, XIX, 80 և ուրիշ շատ.), որից նոր պարս. փերի։ Կրոսեր Ավեստայում այդպես կոչվում էին ոչ զրադաշտական կախարդները, որոնց կերպարում հիշողություններ են պահպանված Իրանի նախկին ոչ իրանական բնակչության մասին, ինչը ճիշտ կերպով նշել էր դեռևս Վ. Գայգերը* (W. Geiger, Ostiranische Kultur im Altertum, Erlangen, 1882, *էջ 81—82, 112—131)»—տե՛ս* И. М. Дьяконов, История Мидии от древнейших времен до конца IV века до н. э., М.—Л., 1956, *էջ 338, ծան. 4 (տե՛ս նաև* Играр Алиев, История Мидии, I, Баку, 1960, *էջ 103, ծան. 5)*։

4 Herod., VII, 68.

5 Herod., III, 94.

6 И. М. Дьяконов, *նշվ. աշխ., էջ 349, 360*։ Ричард Фрай, Наследие Ирана, М., 1972, *էջ 79*։

7 Herod., I, 106, IV, 2; Strabo, XI, 8, 4.

8 Herod., I, 73—74.

յաանդրկովկասյան հարթավայրերի՝ 10-րդ սատրապության մեջ մտած լինելու մասին ենթադրությունը խիստ կասկածելի է[9]։ Ավելի հավանական է, որ դրանք հարավային մերձկասպյան շրջանների (կամ սրանցից միայն արևմտյանների) հետ միասին մտնում էին 11-րդ («կասպերի») սատրապության մեջ։

Մեր կարծիքով, օրթոկորիբանտիները ներկայացուցիչներն էին 10-րդ սատրապության երրորդ էթնիկական տարրի՝ եկվոր իրանական և բնիկ ոչ հնդեվրոպական էթնիկական տարրերի կողքին և, ըստ այդմ, չէին կարող լինել հին պարսիկներից tigraḥauda «սրածայր գլխարկ(ավոր)» հորջորջված միջինասիական սակերի արևելաանդրկովկասյան հատվածը։ Մանավանդ որ օրթոկորիբանտիների և տիգրախաուդա սակերի մի ինչ-որ հատվածի նույնացման տեսակետի դեմ են խոսում նաև հետևյալ հանգամանքները. նախ, սրածայր գլխարկներ կրում էին ոչ միայն այս սակերը (սա այն դեպքում, եթե Ὀρθοκορυβαντιοι, իսկապես, նշանակեր «սրածայր գլխարկավորներ»), այլև Փոքր Ասիայից մինչև Ղազախստանն ընկած տարածքում ժամանակին բնակված մի շարք ուրիշ ցեղեր ևս, ապա, ինչպես ստորև կտեսնենք, Ὀρθοκορυβαντιοι բնավ չի նշանակում «սրածայր գլխարկավորներ»[10] (այսինքն՝ tigraḥauda), վերջապես, Դարեհ I-ի (մ. թ. ա. 522—486 թթ.) և Քսերքսեսի (մ. թ. ա. 486—465 թթ.) արձանագրություններից հայտնի tigrahauda սակերը բնակվում էին ոչ թե Մարաստանում կամ Անդրկովկասում, այլ Միջին Ասիայում և վերջինիցս դուրս չեն հիշատակված։

Ὀρθοκορυβαντιοι տերմինը, բացի «սրածայր գլխարկավորներ» ստուգաբանությունից, ստացել է նաև «բարձունքների բնակիչներ»[11] և «ուղղաձիգ սաղավարտավորներ»[12] ստուգաբանությունները։ Բայց մեր տերմինի մեջ առկա հունարեն ὀρθός բառը նշանակում է ոչ միայն «ուղղաձիգ, վերձիգ», «բարձր, դիք», այլև «ճիշտ, ճշմարիտ», «ճշմարտացի, արդարացի», «ստույգ, ուղիղ, իսկական» և այլն[13]։ Մեր կարծիքով, ὀρθός բառը իր այս վերջին իմաստներից մեկով էլ գործածված է Ὀρθοκορυβαντιοι անվան մեջ։

Մեր այս կարծիքը առայժմ կարող ենք հիմնավորել նրանով, որ խնդրո առարկա տերմինի երկրորդ բաղադրիչը՝ κορυβαντι -ին, նույնական է փոյու-

---

9 Հիշենք, որ արևելաանդրկովկասյան հարթավայրերի և բուն Մարաստանի միջև ձգված լեռնային շրջանները բնակեցված էին աքեմենյաններից գրեթե անկախ կատիշների (կադուսիների) կողմից, որոնք դժվար հաղթահարելի խոչընդոտ էին հիշյալ շրջանները 10-րդ (մարական) սատրապության մեջ ընդգրկելու ճանապարհին։

10 «Օրթոկորիբանտիներ» տերմինի այս բացատրությունը 1900 թ. առաջինը տվել է Կիսլինգը և հետագայում այն համընդհանուր ճանաչման է արժանացել գիտության մեջ (И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 248, ծան. 1)։

11 Տե՛ս «Древнегреческо-русский словарь», составил И. Х. Дворецкий, т. II, М., 1958, էջ 1190։

12 Р. Фрай, նշվ. աշխ., էջ 70։ Սակայն κορυβαντα («պարսկական սրածայր գլխարկ») > κορυβαντι- անցումը անհնար է υ > ο և -> υ հնչյունական անհամապատասխանությունների պատճառով։ Իսկ եթե անվան երկրորդ բաղադրիչն է համարվում κόρυς («սաղավարտ») բառը, ապա անհասկանալի է մնում անվան վերջին մասը՝ βαντι-ն (Р. Фрай, նշվ. աշխ., էջ 70)։

13 «Древнегреческо-русский словарь». т. II, էջ 1191։

գական ծագմամբ հունարեն κορύβαντες (նաև κορύβας, -αντος)[14] կրոնական տերմինի հետ։ Կորիբանտներ էին կոչվում փոքրասիական Մայր դիցուհու (Կիբելե, Մա) քրմերը։ Այս դեպքում, Ὀρθο-κορυβάντιοι տերմինի իմաստը լինելու է «իսկական կորիբանտներ», «ճշմարիտ կորիբանտներ» (հմմտ. orpnnfu «ուղղափառ» բառի բուն իմաստը, երբ ὀρθόδοξος < ὀρθός + δόξος «փառք»), ներկայացնելով հիշյալ էթնիկական տարրի ոչ թե բուն ցեղանունը, այլ վերջինիս փոխարինած նկարագրական-բացատրական մի անվանում։ Հայտնի է, որ բարբարոսական ցեղանունների հունացման ընթացքում նկարագրական-բացատրական «ցեղանունների» ստեղծման երևույթը լայնորեն կիրառվում էր հին հույների կողմից (օրինակ, նրանք են ստեղծել այնպիսի «ցեղանուններ», ինչպիսիք են Γαλακτοφάγοι «կաթնակերներ», Ἀνδροφάγοι «մարդակերներ», Φθειροτράγοι «ոջլակերներ, ոջլեր կրծողներ» և այլն)։

Ուրեմն, պետք է ենթադրել, որ օրթոկորիբանտիները ներկայացուցիչներն էին Մարաստանի տարածքում ժամանակին ապրած և իր ակունքները թրակա-փռյուգական աշխարհից առած էթնիկական այն տարրի, որի մնացորդները Հերոդոտի ժամանակաշրջանում (մ. թ. ա. V դար) պահպանվել էին ցեղային-կրոնական (ամենայն հավանականությամբ, կորիբանտական տիպի) մի կազմակերպության տեսքով։ Հեռու չգնալու համար հիշենք, թեկուզև, օրթոկորիբանտիներին հարևան մագերին (Μάγοι),[15] որոնց Հերոդոտը հիշատակում է Դեյոքի շուրջ համախմբված մարական վեց ցեղերի շարքում[16]։ Նրանց ցեղանունը, սակայն, նույնական է հին պարս. magu «մոգ, քուրմ»[17] բառի հետ («այսպիսով, հիմքեր կան ենթադրելու, որ մագերը եղել են քրմական ֆունկցիաներ իրագործող մարական մի ցեղ»)[18]։

Բայց հնարավո՞ր էր, արդյոք, փռյուգական կորիբանտական կազմակերպությունների տիպի կազմակերպությունների գոյությունը, ոչ միայն առևմտյան՝ հունա-հռոմեական աշխարհում, այլև արևելքում և, մասնավորապես, Մարաստանում։ Հարցի դրական պատասխանը բխում է, նախ, Ստրաբոնի հայտնի վկայությունից, թե «ոմանք ասում են, որ կորիբանտները եկել են Բակտրիայից»[19], ապա, հարցին քաջատեղյակ Ս. Պ. Տոլստովի այս առթիվ արած հետևյալ եզրահանգումից. «Այստեղ, հավանաբար, առկա են կորիբանտների փոքրասիական-թրակյան միությունների և նրանց հեռավոր արև-

---

14 Փռյուգերեն բառն ունի հ.-ե. ծագում. κορύβαντες < հ.-ե. *gʷerəbhnt-, *gʷerebh- «սաղմ, ձագ, երեխա»։ Բառս ազգակից է հայերեն կորիւն և ռուսերեն жеребенок բառերին։ Հմմտ. նաև հին հնդկերեն garbhas, ավեստյան garəva «սաղմ», հունարեն βρέφος «պտուղ, նորածին», «ձագ, երեխա» նույնարմատ բառերը (տե՛ս Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 111։ М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. II, М., 1967, էջ 48)։

15 Եթե մագերը օրթոկորիբանտների պարզապես հարևաններն էին և ոչ թե, ասենք, նրանց իրանացած մի հատվածը։

16 Herod., I, 101.

17 Նրանից են ծագում նաև հունարեն μάγος, եբրայերեն māg, պահլավերեն moγ (> հայերեն մոգ) բառերը (Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հատ. III, Երևան, 1977, էջ 337)։

18 Р. Фрай, նշվ. աշխ., էջ 112 (տե՛ս նաև «История таджикского народа», т. I, С древнейших времен до V в. до н. э., М., 1963, էջ 233)։

19 Strabo, X, 3, 19.

վելյան նմանակների միջև ժամանակին գոյություն ունեցած կորպորատիվ կապերի մասին պատկերացումների աղոտ արձագանքներ... Ազգագրական նյութը շատ հավանական է դարձնում ընդհանուր անվան տակ և միասնության գիտակցությամբ միավորված այդ տիպի կազմակերպությունների տերիտորիալ լայն տարածման փաստը»[20]։

Պտղաբերության և սիրո փոքրասիական Մայր դիցուհու իրանական երկվորյակը, ավելի ուշ հայտնի ավեստյան Անահիտ անվամբ (=սեմական Իշտար, հունական Ափրոդիտե, Արտեմիս), հնուց ի վեր պաշտելի էր նաև Մարաստանում։ Դեռևս մ. թ. ա. VIII դարում (գուցե թե ավելի վաղ) տեղական Մայր դիցուհին նույնացված էր սեմական Իշտարի հետ և պաշտվում էր նաև նրա անվամբ։ Ասորեստանի թագավոր Թիգլաթփալասար III-ի (մ. թ. ա. 745—727 թթ.) գորքերը իրենց 737 թ. արշավանքի ժամանակ արևմտյան և կենտրոնական Մարաստանում նվաճել էին մի շարք անծանոթ «երկրներ», որոնց թվում նաև «Իշտարի տունը» (Bit-Ištar)[21]։ Այս առթիվ արժե հիշել Իսիդոր Քարակացու հետևյալ տողերը. «Այստեղից վերին Մեդիան է, 38 սքոյնոս [տարածությամբ] և սկսվում է Կոնկոբար քաղաքով. այստեղ է գտնվում Արտեմիսի տաճարը... Հետո [էկ]բատանա՝ Մեդիայի մայրաքաղաքը, ուր [գտնվում են] գանձարանը և տաճարը, որտեղ միշտ զոհ են մատուցում Անահիտին...»[22]։

Պտղաբերության և սիրո Մայր դիցուհին Մարաստանում պաշտվել է նաև իր ուղեկցի՝ մեռնող-հառնող աստվածության հետ միասին։ Ալեքսանդր Մակեդոնացու պալատական պատմագիր Քարես (Խարես) Միտիլենացու հաղորդած մարական ավանդություններից մեկը սկսվում է այսպես. «Վշտասպը (Հյուստասպես) ուներ կրտսեր եղբայր Զարեհ (Զարիադրես) [անունով]։ Նրանց մասին տեղացիներն ասում էին, որ ծնվել են Ափրոդիտեից և Ադոնիսից[23]։ Վշտասպն իշխում էր Մարաստանում և ստորին երկրում, իսկ Զարեհը՝ Կասպիական դռներից վերև մինչև Տանաիս»[24]։

Հանրահայտ ճշմարտություն է, որ հին հույները արևելյան աստվածներին հաճախ կոչում էին իրենց սեփական կամ իրենց՝ քաջ հայտնի (թեկուզև ծագումով օտար) համապատասխան աստվածությունների անուններով։ Ըստ այսմ, վերոհիշյալ ավանդազրույցի մեջ Ափրոդիտեն հանդես է դալիս պտղաբերության և սիրո տեղական Մայր դիցուհու (Անահիտ). իսկ նրա սիրեցյալ Ադոնիսը՝ դիցուհու ուղեկցի՝ համապատասխան մեռնող-հառնող աստվածու-

---

20 С. П. Толстов, Древний Хорезм, Опыт историко-археологического исследования, М., 1948, էջ 309։

21 И. М. Дьяконов, История Мидии, էջ 199, 372։

22 Է. Լ. Դանիելյան, Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 173—174։

23 Ադոնիսի՝ սեմական անվամբ այս մեռնող-հառնող աստվածության և նրա գուգակից Ափրոդիտեի երկմիասնական պաշտամունքը արևելամիջերկրածովյան շրջաններից էր թափանցել Հունաստան։ Արևելքում այն հետագայում ևս գոյատևում էր իսլամի տարբեր աղանդների (հատկապես իրանական շիիզմի) քողի տակ (տե՛ս Л. Штернберг, Первобытная религия в свете этнографии, Л., 1936, էջ 457։ А. Массе, Ислам, М., 1962, էջ 148—149, 162—163)։

24 И. С. Брагинский, Из истории таджикской народной поэзии, М., 1956, էջ 142—143։

թյան (Միթրա) փոխարեն[25], «Տեղացիների» (Մարաստանի բնակիչների) կողմից թաղակիր եղբայրներին այս զույգ աստվածությունների զավակները համարելու իրողությունը դրդում է ենթադրելու, որ սրանք՝ Մայր դիցուհին և նրա ուղեկից աստվածությունը, եղել են Մարաստանի թագավորական (այս դեպքում, միգուցե, իրականում անգո) ընտանիքի նախնի և հովանավոր աստվածությունները։ Ուրեմն, նրանք պաշտելի էին նաև Մարաստանում։

Օրթոկորիբանտինների թրակա-փռյուգական ծագման և հին Մարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրը ներկայացնելու մասին է խոսում նաև թրակա-փռյուգական էթնիկական տարրի հյուսիս-արևմտյան Իրանում (Մարաստանը ներառյալ) և կից շրջաններում ունեցած երբեմնի բնակության իրողությունը։ «Ծովի ժողովուրդների», դրանց թվում նաև թրակա-փռյուգացիների մ. թ. ա. XIII—XII դդ. մեծ արտագաղթի ալիքները, սկիզբ առնելով Բալկաններում և Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում, ինչպես պարզվում է հին հնդկական աղբյուրների հաղորդած տեղեկություններից, հասել էին մինչև հյուսիս-արևմտյան Հնդկաստան[26]։ Հնդիկ քուրմ Վասիշտհիի ծանոթ հիմնում (Ռիգվեդա, VII, 18) նկարագրվում են արիացի բհարատների «արքա» Սուդասի մղած կռիվները տասը ցեղերից կազմված մի դաշնակցության դեմ։ Վերջիններիս թվում էին նաև ոչ արիական մի քանի ցեղեր, որոնց արևմտյան ցեղակիցները (կամ, բացառված չէ, հասվածները) հիշատակված են մ. թ. ա. XIII դարի վերջին և XII դարի սկզբին եգիպտացիների կողմից հյուսիս շպրտված «ծովի ժողովուրդների» շարքում[27]։

Հյուսիս-արևմուտքից Հնդկաստան ներխուժած արիական և ոչ արիական հիշյալ ցեղերի վերաբերյալ Ս. Կ. Չատերջին գրում է. «Ուրիշ ցեղեր շարժվեցին ավելի հեռու արևելք։ Նրանց մեջ էին բհրիգուները կամ bhṛgu ցեղը (հավանաբար, նման կամ աղգակից մի ցեղ մնացել էր արևմուտք արտագաղթած հնդեվրոպացիների հիմնական զանգվածի հետ. այս արևմտյան բհրիգուները, ըստ երևույթին, Փոքր Ասիա էին մտել Թրակիայի և Մակեդոնիայի վրայով և դարձել Βρύγες կամ Φρύγες, այսինքն՝ փռյուգացիներ), բհարատները (bharata), մադրաները (madra), կուրուները (հմմտ. Kuru-ն որպես անձնանուն. Իրանում Kuruš, հունարեն Κῦρος, որին համապատասխանում է լատիներեն Cyrus գրությունը, Կյուրոսը՝ Աքեմենյան տերության հիմնադիրը)»[28]։

Հնդկական աղբյուրների bhṛgu ցեղանվան և փռյուգացիների անվան միջև լեզվաբանական-ծագումնաբանական կապ է տեսնում նաև Դ. Դ. Կոսամբին[29]։ Իսկապես, հունական Φρύγες ձևին համապատասխանում են

---

25 Աքեմենյան Իրանում Միթրայի միստերիաների ժամանակ նրա դիմակավոր հետևորդները, Ադոնիսի հետևորդների նման, ծիսական պարեր էին կատարում և իրենց աստծո չարչարանքները ցուցադրում (տե՛ս M. Rezvani, Le theatre et la danse en Iran, Paris 1962, էջ 23—24)։

26 С. К. Чаттерджи, Введение в индоарийское языкознание, М., 1977, էջ 50—52։

27 Deb Harit Krishna, Vedic India and Minoyan men. „Studia Indo-Iranica" Leipzig, 1931, էջ 177—184։

28 С. К. Чаттерджи, նշվ. աշխ., էջ 51։

29 Д. Косамби, Культура и цивилизация древней Индии, Исторический очерк, М., 1968, էջ 90։

փռյուգացիների ցեղանվան փռյուգա-միսիական Βρυγες, Βρυγοι, Βρυγοι ձևերը (կան նաև Βριγες, Βρύκης, Βρυκαι տարբերակները)[30], որոնք ենթադրում են *Bhrug(h)es նախատիպը՝ սերած հ.-ե. *bhrūg(h)- «վայելել, օգտվել» բառից[31]։

Թրակա-փռյուգական ցեղերի տեղաշարժերը արևմուտքից Հնդկաստան, բնականաբար, պետք է տեղի ունենային գլխավորապես հյուսիսային Իրանի (ուրեմն, նաև Մարաստանի) և ներկայիս Աֆղանստանի վրայով։ Մարաստանին արևմուտքից հարող շրջաններում ժամանակին հաստատված թրակա-փռյուգական էթնիկական տարրի մնացորդ էին լինելու դարդանները Քալոնիտիս երկրում[32], որը բռնում էր Զագրոսի արևմտյան լանջերը «Մեդիա խորագույն» երկրի և հարթավայրային Միջագետքի միջև[33]։ Դարդանների վերաբերյալ Հերոդոտը հաղորդում է հետևյալ կարճ տեղեկությունը. «Այս գետի (Γόνδης —Ս. Պ.) ակունքները գտնվում են Մատիենական լեռներում, իսկ հոսում է դետը դարդանների երկրով և թափվում մեկ ուրիշ գետի՝ Տիգրիսի, մեջ»[34]։

Դարդանների Δαρδανοι ցեղանունը, մեր կարծիքով, նույնական է հոմերոսյան ժամանակաշրջանի Δαρδανοι, Δαρδανιοι թրակյան ցեղանվան հետ (հմմտ. նաև Δαρδανεῖς, Δαρδανεύς ցեղանունը Դանուբի բալկանյան աջափնյակում)[35]։ Հին հունական ավանդությունների համաձայն, պելասգների[36] մի հատված, Դարդանոսի (Δαρδανος) գլխավորությամբ Կրետեից արտագաղթելով հաստատվել էր Տրոյայում[37]։ Վերջինս այստեղ հիմնադրել էր իր անունը կրող Դարդանիա (Δαρδανιη) քաղաքը, դառնալով հետագա տրոյական թագավորների նախնին[38] (այստեղից էլ՝ Δαρδανιος թե՛ «դարդանիացի», թե՛ առհասարակ «տրոյացի» իմաստներով)։ Հետաքրքիր է, որ

30 Թրակիայի հարավում ավելի ուշ ևս հանդիպում ենք այս նույն ցեղանվանը (տե՛ս Herod., VI, 45, VII, 73 և 185)։

31 В. И. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, էջ 141։ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 118—119։

32 Ըստ երևույթին սրանց լեզվից է դալիս տեղի Γόνδης (Herod., I, 189) գետանունը։ Հավանաբար, *Gundēs < *gu-nt-։ Արմատի համար հմմտ. հայ. զո-շ-ել, կո-շ-ել, ռուս. гу-д-еть, гу-к-ать, հուն. γοος «հնձկլտոց, հառաչանք, լացուկոծ» և այլն։ Իսկ -nd- <-nt- բաղադրիչի հետ հմմտ. լատին. ve-nt-us, գոթ. wi-nd-s «հողմ, քամի» (բայց ռուս. ве-ять) բառերի համապատասխան բաղադրիչները։ Իմաստի տեսակետից հմմտ. հայկ. Ուռուան (ուռու-ալ բառից) գետանունը։

33 «Արտաշիսյանների թագավորությունը մ. թ. ա. I դ.» քարտեզը, «Հայկական Սովետական Հանրագիտարան», հատ. 2, Երևան, 1976, էջ 40—41։

34 Herod., I, 189.

35 Վ. Ի. Գեորգիևի կարծիքով, համեմատվող ցեղանունների հիմքում ընկած է թրակերեն նարգա—«տանձ» բառը (հմմտ. ալբաներեն dardhë «տանձ»)—В. И. Георгиев, նշվ. աշխ., էջ 119, 172։

36 Պելասգների և թրակացիների ծագումնաբանական ընդհանրության մասին է խոսում նրանց լեզուների ընդհուպ բարբառային աստիճանի հասնող մերձավորությունը (В. И. Георгиев, նշվ. աշխ., էջ 281։ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 49, 83)։

37 Strabo, XIII, 1, 48. «Անկասկած է «Տրոյական ցեղամիության» մեջ բալկանյան էթնիկական բաղադրատարրի գոյությունը» (Л. А. Гиндин, Проблемы античной балканистики, Лингвистический аспект, «Вопросы языкознания», 1973, № 1, էջ 73)։

38 Apollod., III, 138.

դարդանները (եգիպտ. արձանագր. drdnı) հիշատակված են Փոքր Ասիայի արևմուտքից եկած այն մարտիկների շարքում, որոնք Մուվատալուի խեթական զորքերի հետ միասին Քադեշի ճակատամարտում (մ. թ. ա. XIV դարի վերջ կամ XIII դարի սկիզբ) մարտնչում էին Ռամսես II-ի (մ. թ. ա. 1317—1251 թթ.) եգիպտական զորքերի դեմ[39]։

Ն. Ադոնցի կարծիքով, Մարաստանի մատույցներում, Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի սահմանամերձ շրջաններում թրակա-փռյուգական էթնիկական տարրի երբեմնի բնակության մասին է խոսում ինչպես Արմենոսի և նրա ուղեկիցների մասին պատմող հին ավանդազրույցը (համաձայն որի, սրանց բնակության սահմանները Հայկական լեռնաշխարհի հարավում հասնում էին մինչև Կալաքենե և Ադիաբենե)[40], այնպես էլ այն հանգամանքը, որ ներկայիս Իրաքի հյուսիսում «...գտնվել է նաև մի քանդակված դեմք փռյուգական գլխարկով՝ Դեիր և Հարիր գյուղերի միջև, մի ժայռի վրա, Արբելայից հյուսիս»[41]։

Թրակա-փռյուգական էթնիկական տարրի այս կողմերում ժամանակին ունեցած բնակության տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն է հարուցում մուսասիրյան Bagmaštu (Bagbartu) դիցանունը։ Մուսասիր քաղաքի հռչակավոր տաճարում (այստեղ էին թագադրվում Ուրարտուի արքաները) Բագմաշտուն պաշտվում էր իր արական զուգակցի՝ Խալդիի հետ միասին[42]։ Նրա անվան առաջին՝ bag- բաղադրիչը նշանակում է «աստված»[43] և ծագում է հ.-ե. *bhag- արմատից որից են նաև հին հնդկ. bhaga- «բաշխող, բաժանող», «հարգելի, պաշտելի», «տեր» (>մի քանի աստվածությունների մականուններ), հին պարս. baga, ավեստ. baγa «տեր, աստված», ռուս. бог, богатый, փռյուգ. Βαγαιος «Զևս աստված» և այլն[44]։

Bagmaštu (Bagbartu) դիցանվան bag- բաղադրիչը, ամենայն հավանականությամբ, ունենալու է թրակա-փռյուգական ծագում (հմմտ. փռյուգական Զևսի Βαγαῖος անունը)։ Մեր կարծիքով, այդ հուշում է հենց նրա տաճարի ձևը։ Դեռևս մ. թ. ա. IX դարի վերջին գոյություն ունեցած այս տաճարի վերաբերյալ Բ. Բ. Պիոտրովսկին գրում է. «Արդեն առաջին հայացքից կարելի է նկատել Մուսասիրի տաճարի կապը Փոքր Ասիայի ճարտարապետական մի շարք հուշարձանների և հին հունական դասական տաճարների նախատիպերի հետ... Լեման-Հաուպտը Մուսասիրի տաճարն իրավացիորեն կապում է Պափլագոնիայի հուշարձանների հետ, իսկ Հերցֆելդը նշում էր, որ տաճարի երկրաչափական նախշուղարդերով ճակատը հիշեցնում է փռյուգական նմուշները»[45]։ Եթե ճիշտ է մեր դիցանվան Bagmaštu ընթերցվածը, ապա այն կարելի է համադրել կենտրոնական Մարաստանի Harbagmaštum տե-

[39] O. R. Gurney, Hetyci, Warszawa, 1970, էջ 53, 79։

[40] Strabo, XI, 4, 8 և XI, 14, 12։

[41] Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 325։

[42] «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, Երևան, 1971, էջ 393։

[43] Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 47։

[44] Տե՛ս М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. 1, М., 1964, էջ 181—182։ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, Երևան, 1971, էջ 373։

[45] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, էջ 402։

դանվան (եթե ճիշտ է այս և ոչ թե Harḫubarra ընթերցվածը) երկրորդ -bagmastum բաղադրիչի հետ[46]։ Իհարկե, ինչպես Ի. Մ. Դյակոնովն է նշում, այս դեպքում ո՛չ առաջինը, ո՛չ էլ երկրորդը չէին կարող ծագած լինել իրանական baga-mazda («աստված իմաստուն») ձևից[47]։

Հենց Մուսասիրի տարածքն էլ, ըստ երևույթին, եղել է այն գլխավոր անցուղին, որով Հայկական լեռնաշխարհի հարավան շրջաններից հյուսիս-արևելյան Միջագետք և հյուսիս-արևմտյան Իրան էին թափանցել թրակա-փռյուգական ցեղերը։ Այս տեսանկյունից ուշագրավ են տեղի բնակավայրերից մեկի հին շրջանի Զինթա, իսկ մյուսի՝ նոր ժամանակներում միայն հայտնի Զինդու անունները։ Զինթա (Zintha, Ζίνθα) ամրոցը գտնվում էր հին Մուսասիրի տարածքը Զագրոսի վրայով հյուսիս-արևմտյան Իրանի հետ կապող լեռնանցքներից ոչ հեռու, այժմյան Շինակի լեռնանցքից արևելք[48]։ Ըստ այսմ, նրա անունը կարելի է ստուգաբանել փռյուգերեն ζετνα «դարպաս, մուտք, անցք» բառի օգնությամբ[49]։ Պետք է ենթադրել, որ zetna-ն դրափոխությամբ վերածվել է *zenta-յի, որից էլ՝ Zintha-ն։ Հիշենք, որ «լեռնանցք» իմաստը պարունակող բառերի վերածումը մերձակա բնակավայրերը նշող հատուկ անունների համատարած բնույթ է կրում աշխարհի տարբեր անկյուններում (հմմտ., օրինակ, հայերեն կապան բառը և Կապան տեղանունները, պարսկերեն darband բառը և Դարբանդ=Դերբենդ տեղանունները)։

Հայկական լեռնաշխարհում և հյուսիս-արևմտյան Իրանում (հին Մարաստանը հարևան շրջաններով) թրակա-փռյուգական էթնիկական տարրի երբեմնի գոյության արձագանքը պետք է համարել այն ավանդազրույցները, որոնք հայերի և մարերի նախնիներին (նրանց բանահյուսական անձնավորումներին) գաղթած էին համարում Բալկաններից։ Ստրաբոնի բերած այդպիսի ավանդազրույցներից մեկի համաձայն, մարերի (մեդացիների) էթնարք Մեդեյոսը (Մեդոսը) որդին էր արգոնավորդ Յասոնի, որը հայերի (արմեների) էթնարք Արմենոսի հետ միասին «հասել էր ընդհուպ Կասպից ծով, այցելելով Վիրքը, Աղվանքը և Հայաստանի ու Մարաստանի մեծ մասը»[50]։

Թրակա-փռյուգական էթնիկական տարրի Մարաստանում ունեցած երբեմնի բնակության վկաներն են նաև տեղի, թրակա-փռյուգական լեզուների օգնությամբ ստուգաբանվող, տեղանունները։ Դրանցից հատկապես ուշադրության է արժանի Aruandu (միջին դարերում Arvand) լեռնանունը,

---

46 Քանի որ Բագմաշտուն (Bag-maštu) դիցուհի էր, ուստի նրա անվան maštu (*mastu, *masto) բաղադրիչը, թերևս, կարող է ծագումնաբանական կապ ունենալ հունարեն μαστός, μασθός, μαστός) բառի հետ, որը նշանակում է նախ և առաջ «լանջ, կուրծք, ստինք», ապա նաև՝ «կլորավուն բարձունք», «բլրակ, բլուր»։ Վերջին իմաստով է, հավանաբար, այս նույն արմատը պահպանված հայկական Մաստառ լեռնանվան (Շիրակում) և Մաստարա տեղանվան (Արագածի լանջին) մեջ։

47 И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван. 1968, էջ 191, ծան. 3։ Նույնի՝ История Мидии, էջ 208, ծան. 4.

48 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 52։

49 Փռյուգերեն ζετνα < հ.-ե. [illegible], որից են նաև հիր. ged-, թրակ. gesti, անգլո-սաքս. geat «դուռ, դարպաս», ինչպես նաև հայերեն սեմ «դուռ» բառերը (В. И. Георгиев. նշվ. աշխ., էջ 142, Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 15, 114)։

50 Strabo, XI, 4, 8.

որովհետև, ինչպես Վ. Ի. Գեորգիևն է իրավամբ նշում, «աշխարհագրական անվանումների հետազոտության հիման վրա կարելի է թանկարժեք հետևություններ անել տվյալ շրջանի հնագույն բնակչության լեզվական պատկանելության վերաբերյալ։ Հատկապես կարևոր նշանակություն են ստանում մեծ գետերի (չրերի) և լեռների անունները»[51]։

Հին Մարաստանի մայրաքաղաք Էկբատանը (այժմ՝ Համադան) գտնվում էր Aruandu (այժմ՝ Aluand) լեռան երկու ճյուղավորումների միջև ընկած հարթավայրում։ Միջին դարերում լեռը կոչվում էր Arụand, իսկ անտիկ աղբյուրներում նաև Orontes[52]։ Քանի որ Aruandu = Aruand-ը լեռան անուն է, ուստի, մեր կարծիքով, հնարավոր է այն բխեցնել հ.-ե. *peru-n-to- նախաձևից (վերջինիցս են ծագում հին հնդկ. parva-ta «լեռ», խեթ. peruna «ժայռ», perunant «ժայռոտ» և աղգակից մյուս լեզուների համապատասխան բառերը)։ Բացառված չէ, որ հայերեն հրվանդան (հրուանդան) բառը ևս ծագած լինի այս նույն նախաձևից, քանի որ նշանակում է «սարավանդ», «ծովեզերյա բարձր տեղեր», «ցամաքի նեղ շերտ, որ երկար ձգվում է ծովի մեջ»[53] (ինչպես նաև «երևսբաց պատշգամբ»)[54]։ Հավանաբար, այս նույն նախաձևից է սերում նաև Միջագետքի հյուսիս-արևելյան լեռնոտ մասում (արդի Իրաքի հյուսիսում) բնակված ցեղերից մեկի անտիկ շրջանի Oroandes (Orontes) անունը[55], որն առնչում են այստեղ գտնվող բնակավայրերից մեկի ժամանակակից Ռավանդուզ (Ռեվանդուզ) անվանը[56]։

Դժվար չէ նկատել, որ հ.-ե. *perụ-n-to- > Aruand անցումը օրինաչափ չէ ո՛չ թրակերենի ու պելասգերենի, ո՛չ փռյուգերենի հնչյունաբանական անցումների տեսանկյուններից, որովհետև նրանց մեջ հ.-ե. նախաձայն *p-ն վերածվում է ph-ի (ֆ-ի) և ոչ թե անհետանում։ Թրակա-փռյուգական լեզվաճյուղին պատկանած այն լեզուն, որով կազմված է Aruand (Aruandu) լեռնանունը, հ.-ե. նախաձայն *p-ն անհետացնելու իր հատկանիշով (ինչպես և r-ից առաջ e > a, ụ > au, ռնգային n-ից հետո ι > o անցումներով) ավելի մոտ է կանգնած հայերենին և կարող էր լինել նախահայերեն (կամ, միգուցե, նրա որևէ բարբառը)։

Արվանդ (Ալվանդ) լեռան մերձակայքում նախահայերենով (կամ նրա որևէ բարբառով) խոսած էթնիկական տարրի երբեմնի գոյության մասին է

---

51 В. И. Георгиев, նշվ. աշխ., էջ 253։

52 В. В. Бартольд, Сочинения, т. VII, М., 1971, էջ 137։

53 Հմմտ. վերոհիշյալ բառերի հետ նույնածագում Πειρωτός, Πειρωτος, քաղաքի անունը այժմյան Մարմարա ծովի հյուսիսային ափին (տե՛ս В. И. Георгиев, նշվ. աշխ., էջ 131։ Л. А. Гиндин, К возможности реконструкции фракийского языка на материале греко-римских надписей, «Вестник древней истории», 1978, № 3, էջ 140)։

54 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. III, էջ 138։ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. III, Երևան, 1944, էջ 153։

55 Plin., Nat. Hist., VI, 118.

56 Տե՛ս Հ. Մանանդյան, Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 29։

57 Այնուամենայնիվ, բացառված չէ, որ այս օրինաչափությունը գործած լինի նաև հայերենին առավել մոտ կանգնած թրակա-փռյուգական լեզվաճյուղի առանձին լեզուներում։ Հիշենք, ամբողջ Թրակիայի պաշտամունքի առարկան դարձած Հերոս (Ἥρως) հեթյալ աստվածության անունը. Ἥρως < *HerṲ = խեթ.-լուվ. PerṲa (տե՛ս Л. А. Гиндин, նշվ. աշխ., էջ 138)։

խոսում նաև Մարաստանի հին մայրաքաղաքի (այժմյան Համադանի) Ha(n)gmatāna անվան ստուգաբանությունը[58]։ Տեղանվան hang- բաղադրիչը, մեր կարծիքով, իր *heng (<հ.-ե. *penkᵘ̯-) նախաձևով նույնական է հայերեն հինգ (<հ.-ե. *penkᵘ̯-) բառի հետ, որի մյուս ազգակիցներն են հին հնդկ. panča, ավեստ. panca, հուն. πέντε, լիտվ. penki («հինգ») բառերը և այլն։ Հ.-ե. այս բառով նախապես նշվում էր «մի ձեռքի հինգ մատները»[59]։ Երկրորդ՝ -matāna, բաղադրիչը պետք է աղերսակցել հայերեն մատն (<հ.-ե. *māt-) բառի հետ, որը ածանցման և բառաբարդությունների մեջ հանդես է գալիս նաև մատան ձևով (մատանի, մատանահար «մատանիով կնիք», մատանել «կնքել»)։ Մեր բառի ազգակիցներն են հին կիմր. maut, միջին բրետ. meut «բութ մատ», որոնք սերում են կելտական *mato- նախաձևից[60]։ Այսպիսով, Ha(n)gmatāna (>Hamadān>Hamadan) տեղանունը նշանակում է պարզապես «հինգ մատներ», այսինքն՝ «հինգ մատների (քաղաք)»[61] և, ըստ երևույթին, արդյունքն է այս բնակավայրում[62] ժամանակին Մայր դիցուհու պաշտամունքն իրականացրած կորիբանտական կազմակերպության (իր «հինգ քրմերի» հաստատությամբ) գոյության։

«Հինգ քրմերի» հաստատության դասական օրինակը Կիբելեի քրմերի «Իդայական դակտիլներ» կոչված հնգյակն է (Δάκτυλοι Ἰδαῖοι բառացիորեն նշանակում է «իդայական մատներ», հուն. δάκτυλος «մատ»)։ Ստրաբոնի բերած մեկ ուրիշ տեսակետի համաձայն, հնագույն հինգ դակտիլներից էին սերում փռյուգական կորիբանտները[63]։ Հին Իրանում և Միջին Ասիայում գոյություն ունեցած նույնպիսի հաստատության և Զրադաշտ մարգարեին թշնամի հինգ կառապ (կառապան) եղբայրների միջև ակնառու աղերս է տեսնում Ս. Պ. Տոլստովը, որի կարծիքով, karap (karapan) տերմինն անգամ ծագումնաբանորեն կարող է նույնական լինել κορύβας (κορύβαντος) բառի հետ[64]։

Կարելի է նույնիսկ ենթադրել, որ մարական ցեղամիության կորիզը ստեղծվել էր որպես Մայր դիցուհու պաշտամունքի շուրջ համախմբված հինգ ցեղերի մի դաշնակցություն։ Հերոդոտի հաղորդած տեղեկություններից մեկի համաձայն «...Դեյոքը միավորեց մար ժողովրդին և թագավորեց ամբողջ Մարաստանում։ Մարական ցեղերը հետևյալներն են. բուսեր, պարետակեններ, ստրուխատներ, արիզանտներ, բուդիներ և մոգեր։ Ահա քանիսն են մարա-

58 Եղած ստուգաբանությունները, ըստ որոնց Ha(n)gmatāna < իրան. ham- «միասին» + gam- «գալ, քայլել» (իբրև «հավաքվել»>«հավաքատեղի») կամ Ha(n)gmatāna < էլամ. *Hal-mata-na «մարերի երկիր», չի կարելի ընդունելի համարել, թեկուզև, հարուցվող հնչյունական կարգի դժվարությունների պատճառով։

59 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. III, էջ 95։

60 Նույն տեղում, էջ 270։

61 Այս առումով ուշագրավ է ինչպես կիպրական Πενταδάκτυλος լեռան անունը (<Πεντα «հինգ» + δάκτυλος «մատ»), այնպես էլ այն հանգամանքը, որ ոչ հեռու անցյալում էս հիմնականում զրադաշտական պարսիկներով բնակեցված Եզդ քաղաքի մուտքը զարդարված էր սրբազան ձեռքը խորհրդանշող ոսկեզօծ փանջեով (պարս. panje «դաստակ», բառացիորեն՝ «հնգյակ»)—А. Ланов, По персидским дорогам, М., 1934, էջ 180։

62 Հիշենք, որ այստեղ էր գտնվում Անահիտի հռչակավոր տաճարներից մեկը։

63 Strabo, X, 3, 22.

64 С. П. Толстов, նշվ. աշխ., էջ 308—309։

կան ցեղերը»[65]։ Հերոդոտի այս հաղորդումը ավելի ուշ ժամանակաշրջանի իրողություն է արտացոլում, որովհետև իրանախոս հիշյալ ցեղերից մեկը՝ արիզանտները (Ἀριζαντοι < arya-zantu «արյա ցեղ»՝ սկզբնապես միակ իրանախոս ցեղը), նախապես առանձնակի էր կանգնած և համեմատաբար ուշ էր ընդգրկվել մարական ցեղամիության մեջ[66]։ Այս առթիվ ավելորդ չենք համարում ամբողջությամբ մեջ բերելու Ի. Ալիևի հետևյալ տողերը. «Իրականում, մարական Madai ցեղամիության մեջ արիզանտները, ակնհայտորեն, այլածին տարր էին։ Դա, կարծես, ապացուցում է նաև Սարգոն թագավորի վերոբերյալ արձանագրությամբ[67], ըստ որի, «արիբի»-ները (ըստ երևույթին, նույն արիզանտ-արիները) առանձնակի էին կանգնած և մարերի հետ չէին առնչվում։ Արձանագրության մեջ խոսվում է միայն «արիբիների» սահմաններիս ապրող մարերի մասին։ Երկու անվանումները հստակ կերպով զատորոշվում են։ Այստեղից կարելի է ենթադրել, որ դեռևս մ. թ. ա. VIII դարի երկրորդ կեսին անգամ այդ արիները չէին մտնում մարական ցեղամիության մեջ։ Նրանք ուշ էին մտել նրա մեջ և որպես մնացած մարական ցեղերից տարբերվող բացահայտ օտարածին մի տարր, սկսել էին իրենց շրջապատող զանկվածի կողմից կոչվել «արիների ցեղ»՝ Ἀριζαντοι»[68]։

Թրակա-փռյուգական էթնիկական տարրի հին Իրանում և, մասնավորապես Մարաստանում ունեցած երբեմնի բնակության մասին են խոսում նաև արևմտա-իրանական այն հատուկ անունները, որոնք արձանագրել են թրակերենին և փռյուգերենին հատուկ b>m (m>b) հնչյունափոխությունը[69]։ Մեզ հասած թրակյան և փռյուգական մի շարք հատուկ անուններ ավանդված են զույգ՝ b-ով և m-ով, տարբերակներով։ Դրանցից են, օրինակ, թրակյան Βενοῖς = Μενοῖς դիցանունը, Βαργος = Μαργος գետանունը, փռյուգական Βα=Μα դիցանունը, Σιβυς = Σιμυς գետանունը և այլն[70]։ Այս հնչյունափոխությունները կիրառության որոշակի ոլորտ են ունեցել նաև հին հունարենում (հինբալկանյան լեզուների ազդեցությամբ) և ալբաներենում[71]։ Դրանք, սահմանափակ ոլորտ ունենալով հանդերձ, պետք է գործած լինեին նաև նախահայերենում (կամ նրա որևէ բարբառում)։ Հայկական լեռնաշ-

---

[65] Herod., I. 101.

[66] Н. М. Дьяконов, История Мидии, էջ 148, ծան. 4 (տե՛ս նաև էջ 221)։ Նման հնգյակ կազմով ցեղամիությունների հաճախ ենք հանդիպում հին աշխարհի տարբեր երկրներում։ Հիշենք, օրինակ, մ. թ. ա. XII դարում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքից հյուսիս-արևմտյան Միջագետք ներխուժած մուշկերի հինգ ցեղերին իրենց հինգ «թագավորներով» հանդերձ, կամ Իլանդիայի կելտական նվաճումից հետո այնտեղ ստեղծված ցեղամիությունը իր հինգ «ցեղային թագավորություններով»։

[67] Խոսքը Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի (մ. թ. ա. 722—705 թթ.), 713 թ. դեպի հետագա Մարաստանի խորքերը ձեռնարկած արշավանքը նկարագրող արձանագրության մասին է (տե՛ս Н. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 219—220)։

[68] И. Алиев, նշվ. աշխ., էջ 99։

[69] Д. Дечев, Характеристика на тракийския език, София, 1952, էջ 23։

[70] В. И. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, էջ 114, 134, 257։ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 112, 120, 128, 130։

[71] В. П. Нерознак, Словарь Гесихия как источник для изучения древних реликтовых индоевропейских языков, «Вопросы языкознания», 1978, № 4, էջ 62։

խայրէի տեղանուններից և աշխարհագրական անվանումներից այդպիսի զույգ տարբերակներով հայտնի են. Առբեր-անի = Armar-ili, Gardaban-i = Գարդ-մանք, Zerbis = Զերմ և այլն։ B > m (m > b) հնչյունափոխության արձա-նագրված Ἐκβάτανα = Ἀγβάτανα = Ha(n)gmatāna տեղանուններից բացի Իրա-նում հայտնի էին նաև Bagabuhša (Բիսեթուն. արձ.) = Μεγάβαζος (Հե-րոդ.)[72], Bardiya (Բիսեթ.) = Μάρδις (Էսքիլ.) = Σμέρδις (Հերոդ.)[73] անձնա-նունները[74]։

Հայտնի է, որ Մարաստանի հնագույն բնակիչները իրանախոս չէին։ Իրանական ցեղերը արևելյան Մարաստան թափանցել էին մ. թ. ա. XI—X դդ., իսկ արևմտյան Մարաստան (հետագա Ատրպատականի տարածքը ներառյալ)՝ IX—VII դդ. ընթացքում[75]։ Ավելի ուշ իրանախոս էթնիկական տարրը այստեղ դարձել էր գերակշռող, բայց և այնպես ոչ իրանական էթնի-կական տարրերը Մարաստանում ու հյուսիս-արևմտյան Իրանի մյուս շրջան-ներում գոյատևում էին ինչպես Մարական (մ. թ. ա. VII դարի վերջ—VI դա-րի առաջին կես) ու Աքեմենյան (մ. թ. ա. VI դարի երկրորդ կես—IV դարի առաջին քառորդ) աշխարհակալությունների գոյության ժամանակաշրջաննե-րում, այնպես էլ ավելի ուշ[76]։ Ենթադրվում է, որ այդ էթնիկական տարրերն ունենալու էին «կասպիական» կամ «ղագրոս-էլամյան» ծագում[77]։ Այսուհան-դերձ, Հերոդոտի վերոբերյալ տեղեկությունը[78], վերևում ասվածների հետ միասին, թույլ է տալիս ավելի հավանական համարելու մեր առաջ քաշած այն տեսակետը, ըստ որի հինմարական ձևավորված էթնոսին նախորդած Մարաս-տանի տարածքի ցեղային խմբավորումների մեջ եղել են ոչ միայն իրանա-կան (եկվոր և հենց սկզբից իրանախոս) ու «կասպիական» կամ «ղագրոս-էլամյան» (այսինքն՝ տեղաբնիկ ոչ հնդեվրոպական), այլև թրակա-փռյուգա-կան (եկվոր հնդեվրոպական, բայց ոչ իրանական) էթնիկական տարրեր[79]։

---

72 Bagabuhša — Μεγάβαζος էր կոչվում ինչպես Դարեհ I-ի (մ. թ. ա. 522—486 թթ.) դաշնակիցը, այնպես էլ վերջինիս թոռը։

73 Այս անունն էր կրում ինչպես Կյուրոս Մեծի (մ. թ. ա. 559—530 թթ.) կրտսեր որդին, այնպես էլ Աքեմենյան գահի հափշտակիչ մոգ Գաումատան։

74 Թրակերենին ու փռյուգերենին բոլորից շատ բնորոշ այս հնչյունափոխությունները նկատի առնելով, կարելի է փորձել նոր ստուգաբանություն տալու առ այսօր գոհացուցիչ ստուգաբանություն չունեցող (Р. Фрай, նշվ. աշխ., էջ 112) magu «մոգ, քուրմ» կրոնա-կան տերմինին, որը, իր չավանդված *bagu տարբերակի միջնորդությամբ, կարող էր ծագած լինել հ.-ե. վերոհիշյալ *bhag- արմատից (հմմտ. փռյուգական Մայր դիցուհու ներքինի քրմերի βάκηλος. βακέλας անվանումները, որոնց հիմքում, հնարավոր է, ընկած է փռյուգերեն *bak- արմատը՝ օրինաչափորեն առաջացած հ.-ե. *bhag- ձևից)։

75 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 150—151։

76 В. В. Бартольд, նշվ. աշխ., հատ. 7, էջ 102, 215; И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 92; Р. Фрай, նշվ. աշխ., էջ 109։

77 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 61—62, 137—139; И. Алиев, նշվ. աշխ., էջ 75, 78—80, 84, 106։

78 Հիշենք, որ Հերոդոտը (ավելի ճիշտ՝ նրա աղբյուրը) X սատրապության բնակչությանը, կարծես թե բաժանում էր երեք էթնիկական խմբերի՝ մարեր, պարիկանիներ և օրթոկորիբան-տիներ (Herod., III, 92)։

79 Թերևս, այս վերջին էթնիկական տարրին էին պատկանում նաև ստրուխատները՝ Դե-յոկի շուրջ համախմբված վեց ցեղերից մեկը (Herod., I, 101)։ Στρούχατες ցեղանվան սկզբնամասի str- հնչյունակապակցությունը բնորոշ է հատկապես հ.-ե. լեզուներին, բայց ավելի շատ թրակա-փռյուգական, քան թե իրանական լեզուներին։

Բուն Մարաստանի տարածքի մյուս երկու էթնիկական տարրերը «կասպիականը» («զագրոս-էլամյանը») և թրակա-փռյուգականը, ավելի ուշ դառնալով իրանախոս, իրանական էթնիկական տարրի գլխավորությամբ մտել էին ձևավորվող հինմարական էթնոսի մեջ։ Իհարկե, դա տեղի էր ունեցել դարերի ընթացքում, աստիճանաբար՝ երկլեզվությունից միալեզվության անցման պրոցեսին զուգընթաց, երբ առանձին ցեղային լեզուների անհետացումը ուղեկցվել է դրանք կրած էթնիկական տարրերի հինմարական էթնոսի մեջ ընդգրկման երևույթով։ Այս կերպ էր պատմության ասպարեզից հեռացած լինելու նաև հին Մարաստանի տարածքի երրորդ (թրակա-փռյուգական) էթնիկական տարրի մնացորդները ներկայացրած օրթոկորիբանտիների կրոնական-ցեղային կազմակերպությունը։

О ТРЕТЬЕМ ЭТНИЧЕСКОМ ЭЛЕМЕНТЕ НА ТЕРРИТОРИИ ДРЕВНЕЙ МИДИИ

С. Г. ПЕТРОСЯН

(Резюме)

По свидетельствам Геродота, в X (мидийской) сатрапии Ахеменидской державы, помимо собственно мидян, жили также парикании и ортокорибантии (Геродот, III, 92). Парикании—представители автохтонного доиндоевропейского населения древней Мидии. Наименование же *ортокорибантии* (греч. Ὀρθοκορύβαντιοι «истинные корибантии»), возможно, говорит о генетическом родстве носителей этого «этнонима» как с малоазиатскими корибантами в частности и с фригийцами вообще, так и с бхригуями (др.-инд. bhṛgu) в древней Индии.

В этом случае, надо полагать, в древнем Иране существовал фрако-фригийский этнический элемент. О его былом существовании на западе древнего Ирана, в том числе в Мидии, говорят древнегреческие предания (согласно которым Медей, этнарх мидян и легендарный основатель мидийской державы, был сыном аргонавта Ясона) и некоторые местные географические названия, такие как ороним Aruandu (< и.-е. *peru̯-n̥-to-). Возможно, о том же свидетельствуют переходы m>b и b>m в некоторых древнеиранских собственных именах, свойственных фракийскому и фригийскому языкам (ср. Hangmatana, Hagmatana = Ἀγβατανα, Ἐκβάτανα; Bagabuḫsa = Μεγαβαζος; Bardiya = Μαρδις, Σμερδις).